

Արձանագրություն թիվ 1

26-ը հունվարի 2012 թվականին տեղի ունեցավ Վաղաշեն համայնքի ընդհանուր ժողովը: Ժողովին մասնակցում էին 262 բնակիչներ: Ժողովին ներկա էր ՀՀ Գեղարքունիքի փոխմարզպետ Ա. Գուկասյանը:

Ժողովի նախագահ՝ Ա. Սուվարյան

Քարտուղար՝ Լ. Հովհաննիսյան

Օրակարգ

1. Վաղաշեն համայնքի ղեկավարի հաշվետվությունը մեկ տարում կատարած աշխատանքների մասին:

/Չեկ. Ա. Սուվարյան/

2. 2012 թ.-ի համայնքի հրատապ լուծում պահանջող խնդիրները:

/Չեկ. Ա. Սուվարյան/

Համայնքի ղեկավար Ա. Սուվարյանը ժողովի մասնակիցներին մանրամասն ներկայացրեց 2011 թ.-ի ընթացքում կատարված աշխատանքների մասին, որոնք նպաստել են համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

2011 թ.-ին 100 %-ով կատարվել է համայնքի բյուջեն: Կատարված բյուջեի շնորհիվ համայնքում իրականացվել են համայնքին վերաբերվող կենսական նշանակության խնդիրներ.

ա) իրականացվել է համայնքում գյուղամիջյան ոռոգման երկու ջրատար առուների հիմնանորոգման աշխատանքների նախագծման և նախահաշվային փաստաթղթերի կազմում, որի համար ծախսվել է 2900.0 հազար դրամ,

բ) գյուղի պարզեցված հատակագծի (գեո. պլան) նախագծման աշխատանքների համար ծախսվել է 2200.0 հազար դրամ,

գ) համայնքում ստեղծվել է «Բարեկարգ Վաղաշեն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն, որը զբաղվում է աղբահանման և շուրջօրյա խմելու ջրի մատակարարմամբ,

դ) կազմակերպվել է սելավատար առուների մաքրում և գյուղամիջյան ճանապարհների վերանորոգում (խճաքարերով),

ե) կատարվել է դաշտամիջյան և «Կոփոյ վար» լայլադատեղի տանող ճանապարհների վերանորոգում,

զ) կատարվել են համայնքային սեփականություն հանդիսացող ոռոգման առվի վերանորոգման և մաքրման աշխատանքներ,

է) աշնանացան ցորենի նոր տեսակի սերմացուի ներմուծման շնորհիվ ընդարձակվել են աշնանացանի ցանքատարածությունները,

ը) բարերարի միջոցներով շարունակվում են եկեղեցու կառուցման աշխատանքները:

Այնուհետև համայնքի ղեկավարը ժողովի մասնակիցներին ներկայացրեց 2012 թ.-ին համայնքում հրատապ լուծում պահանջող խնդիրները.

ա) գլխավոր հատակագծի մշակման համար նախատեսվում է 2200.0 հազար դրամ,

բ) խմելու ջրագծի կառուցում – 2500.0 հազար դրամ,

գ) խմելու ջրագծի նախագծում – 1000.0 հազար դրամ,

դ) մանկապարտեզի շենքի նախագծման աշխատանքների համար – 2000.0 հազար դրամ,

ե) ոռոգման ջրացանցի կապիտալ վերանորոգման աշխատանքներ կատարելու համար – 7960.0 հազար դրամ,

զ) մշակույթի կենտրոնի շենքի կապիտալ վերանորոգման աշխատանքների ավարտը,

է) մանկապարտեզի շենքի կապիտալ վերանորոգում,

ը) նորակառույց դպրոցին խմելու ջրով ապահովում,

թ) «Օստներ» կոչվող թաղամասում ոռոգման նպատակով խորքային հորի կառուցում:

Համայնքի ղեկավարն անդրադարձավ համայնքում սոցիալ-տնտեսական և գյուղատնտեսության զարգացման առկա խնդիրներին և քննադատաբար մոտեցավ համայնքի այն բնակիչներին, որոնք ժամանակին չեն կատարել իրենց հարկային պարտականությունները:

Ժողովում ելույթ ունեցան նաև մի քանի մասնակիցներ, որոնք բոլորի անունից հավանության արժանացրին համայնքում կատարված աշխատանքները և համայնքի ղեկավարի մեկ տարվա կատարված աշխատանքները գնահատվեց բավարար:

Ժողովի նախագահ՝

Քարտուղար՝

Ա. Սուվարյան

Լ. Հովհաննիսյան